ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի նոյեմբերի 07-ին կնքված N «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1.1»պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Անհրաժեշտություն է առաջացել կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքների փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Կնքվել է համաձայնագիր, համաձայն որի պայմանագրի գնի 15 տոկոսի շրջանակներում պայմանագրով նախատեսված աշխատանքներում փոփոխություն է իրականացվել:

Փոփոխության հիմնավորում:
ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետի:

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

07.11.2018թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎԾ-18/1.1 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

Ք. Երևան <<10>> դեկտեմբերի 2018թ

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գազկոմշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Միսակյանի, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 07.11.2018թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎԾ-18/1.1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1.Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացության հիման վրա պայմանագրի գնի 15 տոկոսի շրջանակներում փոփոխություն իրականացնել Պայմանագրով նախատեսված աշխատանքներում՝ համաձայն կատարված շինարարական աշխատանքների ծավալների համադրման:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«Գազկոմշին» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	Ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ-ծ, 20/53,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011019776	Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 02631263	ՀՎՀՀ 00843968
	էլ. հասցեն՝ gascomshin@gmail.com
	հեռ. (095)000027
(ստորագրություն)	(ստորագրություն)
L.S	L.S